

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

*Մարթա Էդուարդի Մելիքսեթյանի «Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԲ.00.05 (քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար*

Երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրն առաջնային տեղ է զբաղեցնում ժամանակակից հասարակություններում, բավարար չափով կանոնակարգում է ստացել թե միջազգային իրավական դաշտում և թե ազգային օրենսդրություններում: Չնայած վերջին շրջանում ՀՀ իրավական դաշտում այս առումով կատարվել է զգալի աշխատանք, այնուհանդերձ պետք է փաստել, որ նշված ոլորտում դեռևս առկա են մի շարք խնդիրներ՝ կապված օրենսդրական անկատարության, այդ իրավունքների լիարժեք իրագործման մեխանիզմների և ընթացակարգերի բացակայության հետ:

Ատենախոսության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հայցորդը հասել է հետազոտության կանխանշված նպատակին՝ բազմակողմանի և համալիր կերպով հետազոտելով երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները, մշակել է օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված հետաքրքիր առաջարկներ:

Նշված եզրահանգումը հիմնավորվում է նաև հայցորդի կողմից հետազոտության ընթացքում հաջողությամբ լուծված հետևյալ խնդիրներով.

- ✓ երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացման առանձնահատկությունների վերլուծությամբ,
- ✓ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների համակողմանի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ,
- ✓ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ քրեաիրավական նորմի կիրառման պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակմամբ,

- ✓ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար արտասահմանյան երկրներում քրեական պատասխանատվության առանձնահատկությունների ուսումնասիրմամբ,
- ✓ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելուն նպաստող դետերմինանտների վեր հանմամբ,
- ✓ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կանխարգելման միջոցների կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակմամբ:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրման հիման վրա Մ. Մելիքսեթյանը համարձակ առաջարկներ է ներկայացրել ոչ միայն ՀՀ քրեական գործող օրենսգրքի, այլ նաև ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական մի շարք ակտերի կատարելագործման ուղղությամբ, ինչպես նաև մշակել երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների հակազդմանն ուղղված գործուն առաջարկներ:

Հարկ է նշել, որ ուսումնասիրվող բնագավառում առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հեղինակը ցուցաբերել է շատ ինքնատիպ և հետաքրքիր մոտեցումներ, վիճելի և խնդրահարույց հարցերի շուրջ կարողացել է փաստարկված բանավեճ ծավալել այլ հետազոտողների հետ:

Ատենախոսի առաջարկված դրույթների և եզրակացությունների հիմնավորվածության բավարար աստիճանն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական և տեսական բազայով, գիտական աղբյուրների և միջազգային փորձի պատշաճ օգտագործմամբ: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես համընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, համակարգային և այլն, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները՝ պատմա-իրավական, տրամաբանական, վերլուծական, համեմատական-իրավական, համակարգային-կառուցվածքային և այլն:

Աշխատանքում Մ. Մելիքսեթյանն օգտագործել է բավականին հարուստ փորձառնական նյութ՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի և ՀՀ քննչական կոմիտեի վիճակագրական տվյալները, ինչպես նաև սեփական ներառական

դիտարկումները (հեղինակը շուրջ 20 տարի, ի պաշտոնե, զբաղվել է անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման հիմնախնդիրներով, երկար տարիներ ղեկավարել է համապատասխան կառույցների գործունեությունը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական ապարատում և տարածքային բաժիններում): Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ներկայացված առաջարկությունները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա հետազոտությունների համար, օգտագործվել ինչպես օրենսդրության կատարելագործման, այնպես էլ իրավակիրառ բնագավառում, իսկ առանձին դրույթներ՝ նաև իրավաբանական առարկաների դասավանդման գործընթացում:

Թեկնածուական թեզի կառուցվածքը բխում է դրա նպատակից և ուսումնասիրվող հիմնախնդիրների շրջանակից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանված են 7 ենթագլխի, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Թեկնածուական թեզի կառուցվածքային մոտեցումը թույլ է տալիս հեղինակին լիովին ներկայացնել աշխատանքի բովանդակությունը, ինչի շնորհիվ ընթերցողը հստակ է ընկալում հեղինակի միտքը: Տվյալ թեզը գրված է լավ գիտական ոճով և դյուրընթեռնելի է:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական թեզում առկա են որոշ վիճարկելի դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ, չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես.

1. Վիճարկելի է պաշտպանության ներկայացված 2-րդ դրույթը՝ կապված նոր որակյալ հատկանիշով (անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ արարքի կատարումը) ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 2-րդ մասը համալրելու հետ: Հատկանշական է, որ նույն հոդվածի 1-ին մասում նկարագրված դիսպոզիցիայում որպես հանցագործության տուժող հանդես է գալիս «երեխան», այլ ոչ թե «անչափահասը», որոնց տարբերությանն ու քրեաիրավական կարգավիճակի առանձնահատկություններին, ի դեպ, հանգամանակից անդրադարձել է հեղինակն իր աշխատությունում (38-38 էջ): Ինչպես գիտենք, երեխան՝ ի տարբերություն անչափահասի, 12 տարին չլրացած անձն է կամ իր

Ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ լիարժեք դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչն, ապրիորի, բնորոշում է անօգնական վիճակում գտնվող անձին (ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), ուստի սույն որակյալ հատկանիշի ամրագրումը քննարկվող հոդվածի 2-րդ մասում գտնում ենք ոչ նպատակահարմար:

2. Լիովին համամիտ ենք «առողջության վատթարացում» եզրույթին իրավական որոշակիություն հաղորդելու հեղինակի սկզբունքային դիրքորոշման հետ (պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթ), սակայն գտնում ենք, որ նշված հետևանքը մեկ այլ՝ «առողջությանը թեթև վնասի պատճառում» հետևանքով փոխարինելու հեղինակային առաջարկն աշխատանքի տեքստում պատշաճ չի հիմնավորվել (էջ 55-56): Ցանկալի կլիներ, որ հեղինակն աշխատության մեջ հանցագործության հետևանքի մասով առավել հանգամանալից անդրադառնար քննարկվող հանցակազմի և առողջությանը թեթև վնաս պատճառելու (հոդ. 171), ֆիզիկական ներգործության (հոդ. 195), ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու (հոդ. 196) հանցակազմերի հարաբերակցությանը, նորմերի միջև անխուսափելիորեն ծագող մրցակցությանը, հետևանքի նկատմամբ սուբյեկտի վերաբերմունքին, ինչպես նաև սանկցիաների համաչափության հիմնախնդիրներին:

Մասնավորապես, եթե հեղինակն իր աշխատանքում անդում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող հետևանքի նկատմամբ («առողջությանը թեթև վնասի պատճառում») հանցագործության սուբյեկտը կարող է դրսևորել միայն ուղղակի դիտավորություն (էջ 71), ապա, բնականաբար, նման պարագայում առողջությանը թեթև վնաս պատճառելը պետք է լիներ նրա նպատակը կամ նպատակին հասնելու միջոցը, կամ նա պետք է նախատեսեր դրանց առաջացման անխուսափելիությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մաս): Այս պարագայում արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 6-րդ կետերով: Ի դեպ, վերջինիս սանկցիան ավելի ծանր է, քան քննարկվող երկօբյեկտ հանցագործությանը, ինչն, ինքնին, նույնպես անտրամաբանական է:

Խնդրի համակարգային վերլուծության հիման վրա ճիշտ կլիներ, եթե հեղինակը երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը հանցագործության սուբյեկտի կողմից չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կապեր ոչ թե հանցագործության հետևանքի՝ երեխայի առողջությանը թեթև վնաս պատճառելու հետ, այլ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսևորման հետ: Ի դեպ, հեղինակն իր աշխատանքի տեքստում (էջ 58-61) հանգամանալից կերպով անդրադարձել է «դաժան վերաբերմունքի» հասկացության պարզաբանմանը, իրավացիորեն նշելով, որ այն իր մեջ ներառում է տուժողին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանքների պատճառումը (ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդված), ներառյալ առողջությանը թեթև վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդված), ֆիզիկական ներգործությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդված): Բացի այդ, հեղինակն իր աշխատանքում (էջ 97-102) բավականին հանգամանալից անդրադարձել է այն երկրների քրեական օրենսդրություններին, որոնք քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են նախատեսել «դաժան վերաբերմունքը»:

Բնականաբար, մեր կողմից առաջարկվող տարբերակի ընտրության դեպքում հարկ կլինի վերանայել նաև նորմի սանկցիան, այն համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիային (ազատազրկում 3-7 տարի ժամկետով):

Այս պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն կնախատեսի երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը հանցագործության սուբյեկտի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու միայն այն դեպքերի համար, երբ վտանգավոր հետևանքների նկատմամբ (երեխայի մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք) նա հանդես է բերել հանցավոր անզգուշություն:

3. Սկզբունքորեն չառարկելով երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում ծնողներից (խնամատարից) երեխային վերցնելու լիազորությամբ ոստիկանության ծառայողներին ևս օժտելու վերաբերյալ հեղինակի առաջարկին (պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթ), այնուհանդերձ գտնում ենք, որ լրացուցիչ կանոնակարգման կարիք ունի նաև այն հարցը, թե մինչև խնամակալության և հոգաբարձության մարմնին հանձնելը, ոստիկանությունը որտե՞ղ պետք է պահի երեխային:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Մ. Մելիքսեթյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով արժևոր:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Մարթա Էդուարդի Մելիքսեթյանի «Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն, որն էական ներդրում կարելի է համարել քրեական իրավունքի գիտության մեջ: Այն համապատասխանում է ԺԲ.00.05 մասնագիտությանը (քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք), բավարարում է ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «իրավաբանական գիտությունների թեկնածուի» գիտական աստիճանի շնորհման:


**Պաշտոնական ընդդիմախոս՝**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի  
Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների  
գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդատու

Ա. Պ. Ղուկասյան

*«Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդատու Ա. Պ. Ղուկասյանի ստորագրությունը հավաստում են՝*

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի  
մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ



Ա. Ղազարյան

«19» մայիսի 2025թ.